ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈՒՆՎԱՐԻ 16-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, հին տոմարով Քրիստոսի հրաշափառ Ս. Ծննդյան տոնի առթիվ պատարագելու և հոգեպես թեմի հավատացյալներին մխիթարելու համար Ռոստով մեկնեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, ընկերակցությամբ Ճեմարանի կրտսեր վերակացու բարեշնորհ Խորեն սարկավագ Պալյանի։

Հունվարի 19-ին գերաշնորհ սրբազան հայրը եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց «Փա՜ռք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն» բնաբանով։

Հավարտ սուրբ պատարագի սրբազան հայրը կատարեց Ջրօրհնյաց հանդեսը, խուռն բազմության ներկայությամբ։

Գերաշնորհ սրբազան հայրը և բարեկրոն Խորեն սարկավագը Մայր Աթոռ վերադարձան հունվարի 21-ին, շաբաթ օր։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 17-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Տաճար այցելեց պերուական տաղանդավոր երգչուհի Իմա Սումակը, իր ամուսնու՝ կոմպոզիտոր Մոիզես Վիվանկոյի և որդու հետ։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 22-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Բարեկենդան առաջաւորաց պահոց»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 29-ԻՆ ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը՝ «Ես եկի զի զկեանս ունիցին, և առաւել ևս ունիցին» բնաբանով (Յովհ. Ժ. 10)։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 31-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեցին ներքին թեմերի առաջնորդներն ու առաջնորդական տեղապահները, թեմական հարցերի շուրջ խորհրդակցելու համար Վեհափառ Հայրապետի հետ։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, առավոտյան ժամը 11-ին, Ս. Էջմիածին այցելեց Մոսկվայում Իրանի դեսպան պր. Անսարին, իր հարգելի տիկնոջ հետ։

Դեսպանը ուղևորվում էր իր պաշտոնատեղին՝ Մոսկվա։

Մեծարգո հյուրը մեծ հետաքրքրությամբ դիտեց Մայր Տաճարը և եկեղեցական արվեստի գանձարանը, ապա բարձրացավ Վեհարան և ընդունվեց Ամենայն Հայոց Հայրապետի կողմից։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 9-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, «Տօն Սրբոց Վարդանանց զօրավարացն» և անվանակոչություն Վեհափառ Հայրապետի։

Ազգային-եկեղեցական տոնի առթիվ, Մայր Տաճարում պատարագեց և «Ցայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել» բնաբանով քարոզեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի, կատարվեց Հայրապետական մաղթանք։ Ապա Նորին Ս. Օծությունը թափորով առաջնորդվեց Վեհարանի Ծաղկյա դահլիճը, որտեղ ընդունեց շնորհավորություններ իր անվան տոնախմբության առթիվ։

Ժամը 2.30-ին, Հոգևոր Ճեմարանում, կազմակերպվեց գրական-գեղարվեստական երեկույթ՝ նվիրված Ս. Ղևոնդյանց և Ս. Վարդանանց խնկելի հիշատակին։

Հանդիսության նախագահում էր Վեհափառ Հայրապետը։

Բացման խոսքն ասաց վերատեսուչ սրբազանը։ Ապա ուսանողության ուժերով կատարվեցին խմբերգեր, արտասանություններ, ընթերցումներ՝ օրվա տոնի խորհուրդը նշող։

Օրվա գլխավոր բանախոսն էր Հոգևոր Ճեմարանի հայոց լեզվի և հայ ժողովրդի պատմության դասատու Գրիգոր Գյուլյանը, որը հանդես եկավ Վարդանանց պատերազմի ազգային-եկեղեցական նշանակության նվիրված բովանդակալից և հոգեշունչ զեկուցմամբ։

Ս. Վարդանանց և Ս. Ղևոնդյանց հիշատակին նվիրված հանդեսը վերջացավ Վեհափառ Հայրապետի պատգամով և «Պահպանիչ»-ով։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 12-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Բուն բարեկենդանի օրը, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 14-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Տյառնընդառաջի տոնի առթիվ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանը՝ «Արդ, արձակեա զծառայս Քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց» (Ղուկ. Բ. 29—31) բնաբանով։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Տաճարում սկսվեցին Մեծ պահոց հատուկ Արևագալի ժամերգությունները։

Առաջին հանդիսավոր Արևագալի ժամերգության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 3-ին, Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ գրական-գեղարվեստական երեկո՝ նվիրված բանաստեղծ Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» գրքի քննարկմանը։

Գրական երեկոյին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» գրքի մասին բովանդակալից զեկուցմամբ հանդես եկավ Մայր Աթոռի Վերստուգիչ հանձնաժողովի անդամ և գրող Գրիգոր Բեքմեզյանը։

Երեկոյին ներկա էր նաև հարգելի հեղինակը, որը սիրով պատասխանեց ուսանողության բազմաթիվ հարցերին։

Վերջում հարգելի բանաստեղծին շնորհակալություն հայտնեց վերատեսուչ սրբազանը հանդիպման համար։

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ